«Հայ գործիչ, բժշկութեան դոկտոր Զաւրիեւը, ռուսահպատակ, որ ծանօթ է նախարարութեան ամենալաւ կողմից, մեկնեց Ֆրանսա ու մեծ-Բրիտանիա՝ նպատակ ունենալով տրամադրել յիշեալ երկրներում կառավարութիւններն ու հանրային կարծիքը ի նպաստ հայկական բաղձանքների իրականացման: Զաւրիեւը խնդրում է մացնել իրեն քաղաքական շրջանները եւ ցոյց տալ հովանաւորութիւն». (135):

Այս հեռագրին Իզվոլսկին պատասխանում է Մայիս 4-17-ին, թիւ 318 հեռագրով.

«Այստեղ հասած բժ. Զաւրիեւը ներկայացրեց ինձ մի յուշագիր մեր արտաքին գործոց նախարարութեան մէջ ունեցած իր խօսակցութիւնների մասին: Այդ գրութեան մէջ ասուած է, ի միջի այլոց, որ Ռուսաստանը մտադիր է առաջարկել պետութիւններին՝ Թիւրքիայի սահմաններում ստեղծել ինքնավար Հայաստան՝ Թիւրքիայի վեհապետութեան ներքոյ եւ երեք պետութեանց՝ Ռուսաստանի, Անգլիայի եւ Ֆրանսայի հովանաւորութեան տակ: Հայաստանի հողը իր մէջ պիտի պարփակէ, իբր թէ, ոչ միայն բոլոր հայկական վիլայէթները, ի բաց առեալ մի քանի ծայրերկրային մասեր, այլ եւ Կիլիկիան՝ Մերսին նաւահանգիստով Միջերկրական ծովի եզերքին, դուրս ձգելով ամբողջ Ալեքսանդրետի ծոցը Իսմուրթալըկով միասին: Ապա, յուշագրի մէջ ասուած է, որ թէեւ սոյն ծրագիրը հաստատուած է մեր արտաքին գործոց նախարարութեան կողմից, որը խոստացել է իր աջակցութիւնը նրա իրագործման համար իր Լոնդոնի ու Փարիզի դեսպանների միջոցով: Բայց, Ֆրանսայի ու Անգլիոյ կողմից որեւէ կասկածից խուսափելու համար, մանաւանդ Կիլիկիայի խնդրում, հայ պատուիրակութիւնները պիտի գործեն առանց ռուսական դեսպանների բացայայտ միջամտութեանց, որոնք կարող են տեղի ունենալ միայն դժուար դէպքերում, այլ եւ երբ դեսպաններն իրենք հնարաւոր գտնեն: Ինձ յայտնի է, որ թէ՛ բժ. Զաւրիեւը եւ թէ վերադարձած Պօղոս Նուպար փաշան վերոյիշեալ իմաստով արտայայտուել են այստեղի արտաքին գործոց նախարարութեան անդամների առջեւ: Այդ պատճառով մի՛ մերժէք յայտնելու ինձ, թէ արդեօք վերեւ ասուած ծրագիրը ստացե՞լ է Ձեր հաւանութիւնը եւ ի՞նչ չափով պարտաւոր եմ աջակցել նրան այստեղ: Կիլիկիային վերաբերուող կէտը ինձ առանձնապէս թւում է փափաք, որովհետեւ Ֆրանսան արդէն յայտնել է մեզ իր տրամադրութիւնը նրա վերաբերմամբ». (135-36):

Սազոնովի պատասխանը լինում է աւելի քան պերճախօս: Մայիս 5-18-ին (թիւ 2307) նա հեռագրում է Իզվոլսկիին.

«Զրոյցները հայերի հետ կրել են զուտ ակադեմական բնոյթ: Ո՛չ մի որոշ ծրագիր Զաւրիեւին չէ մատնանշուած: Նրա խնդրանքին՝ ի նկատի ունենալ հայերի բաղձանքները՝ տեսնել Կիլիկիան մտցուած ապագայ հայկական շրջանի մէջ, պատասխանուած է, թէ մենք չենք կարող պաշտպանել նման փափաք՝ աչքի առաջ ունենալով Ֆրանսական շահերի տիրապետութիւնը Կիլիկիայում». (136):

Սազոնովը ստում էր, որովհետեւ ռուսական արտաքին գործոց նախարարութիւնը ոչ միայն չի մերժել պաշտպանել Կիլիկիայի պահանջը, այլ եւ քանիցս դրդել է այդ ուղղութեամբ հայկական գործիչներին եւ նոյն Զաւրիեւին: Ճիշդ է, Պետերբուրգում չէր ժխտւում, թէ Ֆրանսացիները աչք ունին Կիլիկիայի վրայ, բայց եւ ցանկալի էր համարւում, որ հայերը աշխատեն համոզել Ֆրանսացիներին՝ դիջել Կիլիկիան իրենց:

Այդ աշխատանքը Փարիզում կատարուեց բաւական եռանդուն կերպով: Զաւրեանի Փարիզ հասնելուց յետոյ, Պօղոս Նուպարի պատուիրակութիւնը նոր մղում ստացաւ:

Յունիս 1-14-ին (թիւ 377) Իզվոլսկին հեռագրում է Սազոնովին.

«Փարիզում գտնուող Զաւրիեւն ու Նուպար փաշան ինձ տեղեակ են պահում իրենց խօսակցութիւններին Ֆրանսական կառավարական անձերի, քաղաքական գործիչների եւ լրագրողների հետ՝ նպատակ ունենալով տրամադրել նրանց ընդունելու Ձեզ յայտնի յուշագրի (իմ թիւ 318 հեռագիրը) մէջ արծարծուած բաղձանքները, գլխաւորապէս, Կիլիկիայի հարցի վերաբերմամբ: Նրանց ասելով, թէեւ այստեղի արտաքին գործոց նախարարութեան մէջ շարունակում են պնդել, որ Ֆը-